ՀՐԱՉ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2014

ՀՐԱՉ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ ՄԻՁՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2014

ՀՏԴ 941 (479.25):631

ԳՄԴ 63. 3 (2Հ)+40

Բ 312

Բեգլարյան Հրաչ

Բ 312 Երկրագործական մթերքների վերամշակումը

միջնադարյան Հայաստանում / Հ. Բեգլարյան. –

Եր.: Հեղ. հրատ., 2014 -247 էջ:

Գրքում անդրադարձ է կատարվել միջնադարյան Հայաստանի տնտեսության մեջ կարևոր նշանակություն ունեցող այնպիսի հասութաբեր հաստատությունների, ինչպիսիք են ջրաղացը, ձիթհանը, հնձանը: Փորձ է արվել բացահայտելու դրանց տնտեսական նշանակությունը: Մանրամասնորեն քննարկված է նաև այնպիսի կարևոր հարց, ինչպիսին երկրագործական մթերքների, մասնավորապես հացահատիկային և ձիթատու կուլտուրաների, ինչպես նաև խաղողի վերամշակումն է: Հեղինակը կանգ է առել նաև երկրագործական այլ մթերքների վերամշակման հարցերի վրա:

ՀՏԴ 941 (479.25):631

ԳՄԴ 63. 3 (2Հ)+40

ISBN 978 – 9939 – 0 – 1247 – 6

© Բեգլարյան Հ., 2014

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը աշխարհի հնագույն երկրագործական մշակույթ ունեցող երկրներից մեկն է: Հայկական լեռնաշխարհում սփռված բազմաթիվ հնավայրերից հայտնաբերված հնագիտական հարուստ նյութերը ցույց են տալիս, որ այստեղ երկրագործությունը սկզբնավորվել է դեռևս նոր քարեդարում: Հայտնաբերված աղորիքներն ու սանդերը, ցորենի, գարու, տարեկանի մնացորդները, ինչպես նաև երկրագործության մեջ օգտագործվող բազմաթիվ պարզագույն գործիքները ցույց են տալիս, որ Հայաստանում բրիչային երկրագործությունը առաջացել է անհիշելի ժամանակներում: Հայաստանի տարածքում բրիչային երկրագործության նշանավոր կենտրոններ են եղել Վասպուրականը, Արածանիի հովիտը, Արարատյան դաշտը և այլ վայրեր:

Երկրագործական մշակույթի զարգացումը պետք է ենթադրեր նաև երկրագործական մթերքների թեկուզև պարզ՝ վերամշակում: Դրա լավագույն ապացույցն են հնավայրերից գտնված այդ նպատակին ծառայող բազմաթիվ գործիքները:

Հայկական լեռնաշխարհի յուրօրինակ բնատեսքը (լանդշաֆտ), կլիմայական բազմազանությունը հնարավորություն են տալիս զբաղվելու երկրագործության գրեթե բոլոր ճյուղերով: Հայաստանում, կլիմայական գրեթե բոլոր գոտիներում, լայն տարածում ուներ տարբեր հացաբույսերի մշակումը, իսկ երկրի տաք ու ցածրադիր հովիտներում մշակվում էին խաղող ու բամբակ, բրինձ ու այլ ջերմասեր բույսեր: Բարեխառն լայնություններում տարածում ունեին զանազան մրգերը՝ տանձն ու խնձորը, դեղձն ու խաղողը, բանջարա-բոստանային մշակաբույսերը:

Երկրագործական մթերքների մշակումն ու վերամշակումը Հայաստանում ավելի բարձր մակարդակի հասան միջնադարում, երբ հայ ժողովուրդն իր պատմության կարճատև խաղաղ ժամանակահատվածներում կարողանում էր շենացնել երկիրը, զարկ տալ երկրագործությանը:

Տարբեր աղբյուրներում սփռված նյութերը հնարավորություն են տալիս պնդել, որ միջնադարյան Հայաստանում երկրագործության բավական բարձր մակարդակ է եղել, մարդիկ որոշակի գիտելիքներ են ունեցել հողի մշակման, այդ գործընթացի հերթագայության ու ձևերի, ինչպես նաև երկրագործական մթերքների վերամշակման մասին: V դ. պատմիչ Ագաթանգեղոսն, օրինակ, ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հողի մշակության հերթագայության վերաբերյալ. «Այսպես է մշակությունը, քանզի նախ մշակները վար են վարում, ցելում, կակղացնում, հերկում սնակոշտ երկիրը ակոսածիգ պատռելով պարարտացնում սկզբից քրտնաբեր աշխատությամբ մոլեբույս արմատները ընդ վայր կտրելով (արգելելով) սիզաբույս բանջարեղենի տարապարտ աճումը, ապա սերմանում են օգտակար ցանքի սերմերը»:[1] Ինչպես տեսնում ենք, պատմիչը գյուղատնտեսական աշխատանքների մեջ առանձնացնում է վարելը, պարարտացնելը, մոլախոտերի արմատները վերացնելը և ապա՝ սերմանելը:

Գրեթե նույն հերթականությունն է նշում նաև Մովսես Խորենացին:[2] Պատմահայրն արժանին է մատուցում երկրագործներին, որոնք բազմաթիվ աշխատությամբ ջանք են թափում և արարում բարիքներ:[3] «Վեցօրյայի» հեղինակն էլ զարմանում է, թե այդ ինչպես է լինում, որ նույն ջուրը ճաշակելով տարբեր բույսեր տարբեր կերպարանք են ստանում:[4]

Միջնադարյան Հայաստանում արդեն որոշակի փորձ էր արվում բույսերի դասակարգման, նրանց այս կամ այն հատկանիշը պարզելու համար: Ճիշտ է, այդ բացատրությունները դեռևս հեռու են գիտական լինելուց և

---

[1] Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե.,1983, էջ 286 (Այսուհետև՝ Ագաթանգեղոս):
[2] Սրբոյ քերթողահօր մերոյ Մովսէսի Խորենացւոյ նախակրթութիւն հռետորական ասացեալ գիրք պիտոյից, Վենետիկ, 1796, էջ 177 (Այսուհետև՝ Մ. Խորենացի, Գիրք պիտոյից):
[3] Մ. Խորենացի, Գիրք պիտոյից, էջ 165:
[4] Բարսեղ Կեսարացի, Յաղագս Վեցաւրեայ արարչութեան, Ե.,1984, էջ 156-157 (այսուհետև՝ Վեցօրյա...):

մեծամասամբ բերվում են քրիստոնեական դավանանքի այս կամ այն կետը ավելի լավ բացատրելու համար, սակայն ակնհայտ է, որ հենվում են կյանքի կենդանի երակների՝ մարդկանց կենսափորձի ու դիտարկումների վրա:

Պետք է ընդունել այն իրողությունը, որ միջնադարյան Հայաստանում արդեն կար որոշակիորեն ձևավորված, թեկուզև հիմնականում դիտարկումների վրա հիմնված գիտելիքների համակարգ, երկրագործության, բույսերի մշակման ու վերամշակման վերաբերյալ: Օրինակ՝ «Վեցօրյան» մի այլ առիթով գրում է, թե ինչպես որ բույսը վերևում երևում է իր դալարությամբ, այնպես էլ ներքևում արմատներն են հաստատուն[5]: Նույն աղբյուրը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում խաղողի և ուտելի տարատեսակ արմատների մասին[6]:

Ուշագրավ է և այն, որ պատմիչները դատողություններ են անում մշակների մասին, նրանց գործերը համարելով պիտանի, և շահեկան՝ արդյունքները շտեմարանում ժողովելը և փուշն ու դժնիկը հրո ճարակ դարձնելը[7]: Ճիշտ է, Ագաթանգեղոսն այս մասին խոսում է քրիստոնեական կրոնի համատեքստում, սակայն ակնհայտ է այն, որ նա լավ ծանոթ է երկրագործական աշխատանքներին, տարբեր մշակաբույսերի մշակման նրբություններին:

Երկրագործության և երկրագործի մասին վկայություններ է պահպանում նաև Գրիգոր Նարեկացին իր «Մատյան ողբերգությունում»: Խոսելով մարդկային հոգու ախտերի, մարդկային մեղքերի և նրանց դեմ պայքարելու մասին, նա բազմաթիվ հիշատակություններ է կատարում հողագործի, արդար մշակի և նրա գործի մասին:[8] Երկրագործության մասին վկայություններ ունի նաև Թովմա Արծրունին[9]: Մխիթար

---

[5] Վեցօրյա ..., էջ 134:
[6] Վեցօրյա ..., էջ 159:
[7] Ագաթանգեղայ պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 32:
[8] Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան աշխատասիրությամբ՝ Պ. Խաչատրյանի, Ա. Ղազինյանի, Ե., 1985, էջ 264, 271, 272, 273, 324, 329, 333, 334, 335 և այլն:
[9] Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1877, էջ 172:

Գոշի մի առակում էլ կարդում ենք. «Ի թագաւորէն Աղէքսանդր մեծարեալ լիներ երկրագործ, քան զհիւսն»[10]: Իսկ 13-րդ դարի բանաստեղծ Ֆրիկը ցորենի ցանքի մասին ասում է.

«Ցորեն գեղեցիկ ցանէ, ի բարի յերկիր ւ ի արծակ,
Սպրբիկ քաղհանէ յերակ, մի թողուլ ըզփուշն ի յատակ.
Որ ի հընձելոյ ժամըն ժողովես, զօրանըն յըստակ»[11]:

Միջնադարյան հայ մատենագրության մեջ հարուստ տեղեկություններ են պահպանվել ցանքի, նրա ձևերի ու նրա հետ կապված գյուղատնտեսական գործիքների մասին: Նշված ժամանակաշրջանում երկրագործները հաճախ են կիրառել սերմնափոխության պրակտիկան, իսկ սերմերի ծլունակությունը բարձրացնելու, նրանց վաղ գարնանային ցրտահարությունից հեռու պահելու համար հաճախ սերմին խառնել են գոմաղբ կամ թռչնաղբ: Ֆրիկի բանաստեղծություններից մեկում ասվում է.

«Վարպետ մ երեկ գէմ խիստ ճարտար
Ջաղբըն կըրեց արտի համար»[12]:

Գյուղատնտեսական գործիքների մասին հետաքրքիր տեղեկությունների ենք հանդիպում Մխիթար Գոշի մոտ: Իր առակներից մեկում նա խոսում է այն եզան մասին, որ սկզբում փախչում էր վարից, ապա՝ կալից և հանգստանում է միայն այն ժամանակ, երբ մշակը նրան լծում է սայլին[13]:

Հողը վարելու հնագույն գործիքներից մեկն արորն է: Արորը բրիչի կատարելագործման արդյունքն է: Հետագայում արորին փոխարինելու է գալիս գութանը, որն ի տարբերություն արորի, հողն ավելի խորն էր փորում, իսկ ծանր գութանները՝ շնորհիվ առջևում ամրացրած ձևիչի, նաև շուռ էին տալիս հողը: Ծանր գութանները հայ իրականության մեջ արմատավորվում են

---

[10] Առակք Մխիթարայ Գոշի, Վենետիկ, 1854, էջ 13:

[11] Ֆրիկ, Բանաստեղծություններ, Ե, 1941, էջ 59: «Սպրբիկ» բառը ակներևաբար «սրբկիկ-մաքուր» բառի փոփոխված, աղճատված ձևն է: Նոր բառգիրքը չունի «սպրբիկ» ձևը: Դրա փոխարեն բերում է «սպրկիկ», «սպրուկ», «սպրկուկ» ձևերը և բացատրում որպես մաքուր, ջինջ (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, էջ 740): Ֆրիկի բանաստեղծության վերը բերված հատվածում խոսքն ակներևաբար մաքուր քաղհանելու մասին է:

[12] Ֆրիկ, Բանաստեղծություններ, էջ 201:

[13] Առակք Մխիթարայ Գոշի, էջ 71:

սկսած IX դարից: Հայաստանում ծանր գութանների տարածված լինելու մասին է վկայում Մաթևոս Ուռհայեցին: Վերջինս պատմելով սելջուկ զորավար Իբրահիմ Յաննալի գլխավորությամբ 1048 թ. կատարած արշավանքի ժամանակ Արծն քաղաքում գործած ավերածությունների մասին, նշում է քորեպիսկոպոս Դավթակի առասպելական հարստության մասին: Պատմիչը վկայում է, որ կողոպտիչները նրա ունեցվածքը բարձել են 40 ուղտի վրա և նրա հարստության չափը ցույց տալու համար ավելացնում.«Ութ հարիւր վեցկի եզանց ելանէին ի տանէ նորա»[14]: Չժխտելով վկայության մեջ առկա չափազանցությունը, հարկ ենք համարում նշել, որ XI դարում արդեն շատ տարածված էին գութանները: Վկայության մեջ հիշատակված է վեցկին: Վեցկի լայն իմաստով նշանակել է արոր: Որպես վեցկի բառի հոմանիշներ նշվում են արորը, հարորը, խարորը, ոսկին, չորեցը, չորոցը, չութը: Վեցկավոր նշանակել է երկրագործ[15]:Պետք է ենթադրել, որ «վեցկի» բառը առաջացել է «վեցեկի» բառածևից և նշանակում է վեց անգամ: Այստեղից էլ զգուշավոր ենթադրություն կարելի է անել, թե գութանն իր այդ անվանումն ստացել է կամ վեց խոփ ունենալու համար, կամ վեց եզների ուժով աշխատեցվելու պատճառով:

Գութանավարի բազմաթիվ տեսարաններ են պահպանվել միջնադարյան քանդակներում: Գեղարքունիքի մարզի Նորատուսի գերեզմանոցում, 1582թ. թվագրվող մի տապանաքարի վրա պատկերված է վար անող մարդ: Լավ երևում է գութանը, որի մի անիվը մեծ է, քանի որ ընթանում է ակոսի միջով, իսկ չվարած հողի վրայով գլորվող անիվը փոքր է: Սա ակնհայտորեն ծանր գութան է: Արտը վարող մաճկալը ոտքը դրել է գութանի վրա, մի ձեռքով բռնել մաճը, իսկ մյուս ձեռքում ճիպոտ կամ մտրակ ունի: Գութանին լծված են երկու զույգ եզներ (Տախտակ 1, լուս. 1): Պատկերաքանդակում լավ երևում են սամիները: Քարի աջ մասում պատկերված է մի

[14] Մատթեոսի Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն. Վաղարշապատ. 1898. էջ 103:
[15] Ա Սուքիասյան. Հայոց լեզվի հոմանիշների բառարան. Ե. 1967. էջ 608:

մարդ, իսկ նրա մոտ ակնհայտորեն գութանի և վարի հետ կապված գործիքներ են: Դրանցից մեկն ամենայն հավանականությամբ գութանի խոփը մաքրելու համար է նախատեսված[16]:Նույն գերեզմանոցում, առաջինից մոտ 15 մետր հեռավորության վրա պահպանվել է ևս մի տապանաքար, որի վրա նույնպես գութանավարի տեսարան է պատկերված: Այստեղ ևս գութանին լծված են երկու լուծ եզներ, այստեղ նույնպես պատկերված է խոփսուր (Տախտակ 1, լուս. 2):

Միջնադարյան աղբյուրներում վար անողը կոչվել է «մաճկալ» կամ «ամոլավար»: Մաճկալ Մկրտչի անվան հիշատակությանն ենք հանդիպում Բերկրիում գրված մի ավետարանի հիշատակարանի մեջ[17]: 1422թ. մի այլ հիշատակության մեջ հանդիպում ենք Դովլաշահ մաճկալի անվան հիշատակությանը[18]: Մի այլ ավետարանի 1410 թ. հիշատակարանում էլ հիշվում է Գրիգոր ամոլավարը «որ աշխատէ բազում ջանիւ ի դուռն Աստուածածնին»[19]:

Մատենագրության մեջ բավական տեղեկություններ են պահպանվել նաև հնձի մասին: Պեղումներից հայտնաբերված մանգաղների նմուշներով հնարավոր է պատկերացում կազմել միջնադարյան Հայաստանում օգտագործվող հնձի գործիքների մասին: Անի քաղաքի պեղումներից գտնվել է բրոնզե կիսալուսնաձև մանգաղ, վրան 2 անցք՝ փայտե կոթին ամրացնելու համար[20]: Մի մանգաղ էլ գտնվել է Գառնի ամրոցից 1950 թ.: Այն հիմքի մասում թերի է, բայց ունեցել է մոտ 5,5 սմ լայնությամբ շեղբ: Անիի գտածոների մեջ հանդիպում են նաև երկաթյա մանգաղներ[21]: XVII դ. մի

---

[16] Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի բարբառով այն կոչվել է խոփսուր:

[17] Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Ե., 1955, էջ 24:

[18] Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 295:

[19] Լ. Խաչիկյան, նշվ. աշխ. էջ 295:

[20] Եվ. Մուշեղյան, Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաները, Ե., 1982, էջ 139:

[21] И. Орбели, Избранные труды, т. 1, Е©, 1963, с. 86.

ձեռագրում էլ հանդիպում ենք մանգաղով հացահատիկ հնձող մարդու պատկերի[22]:

Վկայություններից պարզ է դառնում, որ հնձի ժամանակ կատարվել է աշխատանքի բաժանում: Խուրձ կապողն արագորեն խրձում էր հնձածը, որպեսզի հասկն ու հատիկը չչորանային ու չթափվեին գետնին: XI դ. պատմիչ Արիստակես Լաստիվերցին նկարագրում է, թե շինականներն ինչպես էին հնձում ու խուրձ կապում. «Հնձողների հետևից գնում են խուրձ կապողները, հետևում թողած միայն հասկաքաղն ու խոզանն իբրև անասուններին արոտատեղի»[23]:

Հայաստանի տնտեսության ամենակարևոր ճյուղերից մեկն էր հացագործությունը: Հայկական լեռնաշխարհում լայնորեն մշակվել են ցորենը, գարին ու հաճարը: Մինչև օրս Հայկական լեռնաշխարհում պահպանված ցորենի ու գարու վայրի տեսակների առկայությունը հանգեցնում է այն մտքին, որ Հայաստանի պատմական տարածքը եղել է ցորենի նախահայրենիքներից մեկը և նախամարդը առաջիններից մեկն այստեղ է վայրի ցորենը մշակովի դարձրել:

Բազմաթիվ են մեզ հասած տեղեկությունները հացահատիկի մշակման ու վերամշակման վերաբերյալ: Առատ նյութ են տալիս նաև հնավայրերի պեղումները:

Բավական է նշել միայն, որ Շենգավիթում պեղումների ժամանակ բացվել են երկհարկանի շտեմարաններ, որոնց մեջ հայտնաբերվել են հացահատիկի տարբեր տեսակների՝ գարու, հաճարի և ցորենի ածխացած մնացորդներ: Միայն հյուսիսային հատվածում բացված հորերը կարող էին ամբարել 40 տոննա հացահատիկ[24]:

Կապված այդ հարցի հետ առանձնակի կարևորություն են ստանում ինչպես սանդերը, այնպես էլ աղորիքներն ու ջրաղացները: Վերջիններս Հայաստանում լայն տարածում են գտնում միայն Ք.հ. IX դ. վերջում և X դ. սկզբում:

---

[22] Մատենադարանի ձեռ. թիւ 2732, էջ 114 բ:

[23] Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, թարգմանությունը Վ. Գևորգյանի, Ե., 1971, էջ 53:

[24] Հ. Սիմոնյան, Շենգավիթ. շարքային բնակավա՞յր, թե՞ վաղ քաղաք, «Հուշարձան», գիրք Ը, Ե., 2013:

Թեև դրանք միջնադարյան Հայաստանում լայնորեն տարածված էին, սակայն գործածությունից դուրս չէին գալիս նաև երկանքները, ինչպես նաև գրաստերի ուժով աշխատող աղորիքները, որոնք այլ կերպ անվանվում են նաև «երկան իշոյ»:

Միջնադարում հացահատիկի վերամշակման հիմնական կառույցները ջրաղացներն էին: Դրանք, կարող էին առվի կամ գետակի վրա տեղադրված լինել ինչպես առանձին, այնպես էլ շարքերով: Միջնադարյան Հայաստանի իրականությանը ավելի շատ բնորոշ էին ջրաղացաշարերը, որոնք հացահատիկի վերամշակումը կազմակերպող կարևոր արտադրական կառույցներ և հասութաբեր հաստատություններ էին:

Քանի որ հացահատիկը հնուց ի վեր մարդու անփոխարինելի սննդամթերքն էր, այդ պատճառով առավելապես կարևորվում էր նրա պահպանման հարցը:

Հացահատիկները վերամշակելով ստացել են ալյուրի տարբեր տեսակներ և կորկոտ-ձավարներ: Հայտնի են եղել նաև հացի ու հացամթերքների տարբեր տեսակները: Միջնադարյան հայ մարդու կյանքում լայնորեն կիրառվել են այնպիսի հացատեսակներ, ինչպիսիք էին լավաշն ու բոքոնը, քաքարն ու շոթը, բոկեղն ու բլիթը, պաքսիմատն ու ծաղը և այլն:

Հացահատիկի վերամշակության հետ կապված կարևոր արհեստներից ու զբաղմունքներից էին ջրաղացպանությունը, հացթուխությունը կամ խապազությունը: Հիշատակվում են նաև հացկտուրը, հացպանը, թավկիրը և այլն[25]: Հայ իրականության մեջ տարածում են ունեցել բամբակի, բրնձի, կանեփի, վուշի, ընդեղենի (սիսեռ, ոսպ, լոբի և այլն) մշակումն ու վերամշակումը: Թելատու մշակաբույսերի հումքի վրա զարգանում էր արհեստագործության այնպիսի կարևոր ճյուղ,

[25] Վերջիններիս հիշատակությունը կապված է վանական համալիրների և եղբայրանոցների հետ:

ինչպիսին կտավագործությունն էր, իսկ թթենու տերևի հումքի բազայի վրա զարգացել էր երկրի ներսում և հարևան երկրներում լայն պահանջարկ ունեցող հայ մետաքսագործների արտադրանքը: Միջնադարյան գրչագիր ձեռագրերի մանրանկարներում եղած պատկերները, ինչպես նաև ձեռագրերի կազմերի պաստառները մեզ պատկերացում են տալիս կտավագործության և մետաքսագործության մասին: Ոստայնագործը հիշատակվում է միջնադարյան հայ իրականությունից ծնունդ առած և հենց այդ իրականության մեջ այնքան տարածված առակներում ու հանելուկներում:

Երկրագործության կարևոր ճյուղ էր այգեգործությունը: Հայաստանը եղել է ոչ միայն թարմ, այլև չոր մրգերի, գինու ամենանշանավոր արտահանողներից մեկը Մերձավոր Արևելքում: Վկայությունները ցույց են տալիս, որ միջնադարյան Հայաստանում այգեգործությունը, տնկիներ աճեցնելը յուրաքանչյուր մարդու պատվի գործն է համարվել: Ծառ կտրող մարդը պարտավոր էր դրա փոխարեն նորը տնկել: Որպես առանձին զբաղմունք նշվում է այգեպանությունը: Այգեպանը երբեմն նաև մրգապահ է կոչվել:

Ոչ միայն պտղատու այգիներ են տնկվել, այլ նաև պարտեզներ, որոնք ծառայել են իբրև զբոսայգի: Այգիներ են տնկվել ոչ միայն վանքերի և աշխարհիկ ավատատերերի, այլև ուրկանոցների, ուխտավորների ու կարոտյալների համար:

Հիշատակվում են «ձեռնատունկ», «կորդ կամ կորդո արկած» և «նորք» կոչվող այգիները: Լայն տարածում է ունեցել ծիրանի, տանձի, դեղձի, նռան և այլ բազմաթիվ մրգատեսակների մշակությունն ու դրանց վերամշակումը:

Առանձնապես լայն տարածում ուներ խաղողի վերամշակումը, որը Հայկական լեռնաշխարհում հնագույն ավանդույթներ ունի: Երկրագործության այդ ճյուղի վերաբերյալ մեզ տեղեկություններ են հասել դեռևս Վանի թագավորության ժամանակներից: Ուշագրավ են հետագա տեղեկությունները որթատունկի մշակման եղանակների, նրա տեսակների և վերամշակման ձևերի մասին: Վիմագիր և

մատենագիր աղբյուրները, ինչպես նաև հնագիտական հուշարձանների պեղումները տեղեկություններ են տալիս ոչ միայն խաղողի մշակման, այլև նրա վերամշակման մասին: Հիշվում են գինին և ցքին, ռուպն ու չամիչը, շարապն ու քացախը:

Խաղողի վերամշակման ամենակարևոր արգասիքն, անշուշտ, գինին էր, որի պատրաստման և օգտագործման մասին հարուստ տեղեկություններ են պահպանել աղբյուրները, և հատկապես, բժշկարանները: Դեղատոմսերի մեջ ոչ միայն հիշատակվում են տարբեր տեսակի գինիները, այլ նաև նրանց համային որակները բարելավելու տարբեր ձևերն ու մեթոդները: Իսկ հնագիտական աղբյուրները գալիս են հաստատելու հնձանների նշանակությունը որպես արտադրական հաստատություններ (Զվարթնոց, Գառնի և այլն):

Հայ տնտեսական կյանքի կարևոր ճյուղերից մեկն էլ տեխնիկական մշակաբույսերի վերամշակումն էր, և հատկապես՝ ձիթագործությունը: Գրավոր աղբյուրների, հնագիտական պեղումների արդյունքները հանգեցնում են այն եզրակացության, որ ձիթագործությունը եղել է միջնադարյան Հայաստանի տնտեսության զարգացած և կարևոր ճյուղերից մեկը: Երկրում հնուց ի վեր մշակվող ձիթատու բույսերը (կտավատ, քնջութ, կանեփ, ձիթենի) հնարավոր են դարձրել տնտեսության այդ ճյուղի զարգացումը: Ձիթհանները, որ հնում կոչվում էին «Հնձանք իւղոյ», սկզբնական շրջանում գլխավորապես կազմված էին միայն պարզ մամլիչներից: Շիրիկ-ձիթագործը կամ շիրկավաճառը միջնադարի ամենահայտնի արհեստավորներից մեկն էր:

Հնագիտական, ազգագրական նյութերի, ինչպես նաև մատենագրական վկայությունների միջոցով հնարավոր է պարզել ոչ միայն ձեթ պատրաստելու տեխնոլոգիան, այլև ձիթհանները գնահատել որպես արտադրական կարևորագույն հաստատություններ, դրանցից գանձվող հարկերով: Կարևոր հարցերից մեկն էլ ձեթի պահպանումն էր:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ, ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ, ԳԾԱԳՐԵՐ
ԱՂՅՈՒՍԱԿ 1

Թիվ	Որտեղ է գտնվում	Ժամանակը	Ում է պատկել ավատատեր	վանք	մեծատուն
1	2	3	4	5	6
1	Տաթևի վանք	943թ.	1	-	-
2	Մաղարթա վանք	966թ.	1	-	-
3	Կոշ	981թ.	1	-	-
4	Դափուց վանք	10-րդ դար	-	1	-
5	Տաթևի վանք	1006թ.	-	1	-
6	Նոր կյանք	1010թ.	-	-	1
7	Վանևանի սբ Գրիգոր	10-11-րդ դար	-	1	-
8	Մարմաշեն	1029թ.	1	-	-
9	Հաղբատ	1086թ.	-	1	-
10	Հառիճի վանք	1201թ.	-	1	-
11	Հոռոմոս	1201թ.	-	-	1
12	Հաղբատ	1210թ.	1	-	-
13	Հայրավանք	1211թ.	1	-	-
14	Հայրավանք	1215թ.	-	-	1
15	Սանահին	1215թ.	-	-	1
16	Սանահին	13-րդ դար	-	-	1
17	Արդանիշ	1216թ.	-	-	1
18	Դաղի վանք	1244թ.	1	-	-
19	Մարմաշեն	1255թ.	1	-	-
20	Բագարան	13-րդ դար	-	-	1
21	Մեծիրանենց ս.Հակոբա վանք	13-րդ դարի սկիզբ	-	-	1
22	Մորո ծորո վանք	12-րդ դարի վերջ	-	1	-
23	Հայրավանք	13-րդ դարի սկիզբ	-	-	1
24	Կարմիր վանք	1266թ.	-	-	1
25	Նորավանք	1251թ.	-	-	1
26	Հոռոմայր	1271թ.	-	-	1
27	Ծաղկավանք	1284թ.	-	-	1
28	Վարդենիսի շրջ. Ս. Աստծին	1287թ.	-	-	1

29	Հոռոմայր	1290 թ.	-	-	1
30	Ամաղուի Նորավանք	1273թ.	-	-	1
31	Տաթևի վանք	13-րդ դար			
32	Զրվշտիկի վանք	13-րդ դար	-	-	1
33	Անի. Զաքարեի եկեղեցի	13-րդ դար	1	-	-
34	Հոռոմոս	13-րդ դար	-	-	1
35	Բագնայր	13-ոդ դար	-	-	1
36	Բագնայր	13-րդ դար	-	-	1
37	Ծար-Զառ	13-րդ դարի վերջ	-	-	1
38	Լիանոսի վանք	13-րդ դար	-	-	1
39	Գառնի	1315թ.	-	-	1
40	Նորատուս	1344թ.	-	-	1
41	Դափուց վանք	1344թ.	-	-	1
42	Թանատի վանք	14-րդ դար	1	-	-
43	Եղվարդ	1471թ.	-	-	1
44	Սանահին	15-րդ դար	-	1	-
45	Սանահին	1520թ.	-	-	1
46	Թադեոս առաքյալի եկեղեցու մոտի խաչքար	անթվական	-	-	1
47	Տաշքեանդ գյուղ	անթվական	-	-	1
48	Կեչառիսի վանք	անթվական	-	1	-



ԱՆՏԻԿ ԵՐԿԱՆՔ.

Գծ.1



ԵՐԿԱՆՔ ԾՈՎԱԳՅՈՒՂԻՑ

Գծ.2



Գծ.3





Գծ.4



Գծ.5



Գծ.6









ዓሪ.8

ዓሪ.7





ዓሪ.9

ዓሪ.10



Ջրաչաց Նպարների շրջանի Շարագլուխ Գյուղից

1. Նստ, 2.Քար, 3.Թախանով, 4. Ջրառաք առու, 5. Ալրաուն

Գծ.11



Գծ.12

1

2

Տախտակ 1



3

Տախտակ 2

4



5

6

Տախտակ 3



7



8

9

Տախտակ 4



10



11

Տախտակ 5

12



13



14

Տախտակ 6

15

16

Տախտակ 7

17



18 19

Տախտակ 8



20



21

Տախտակ 9



22

23

Տախտակ 10

24

25



26

Տախտակ 11

27



28

Տախտակ 12

29

30



31

Տախտակ 13

32



33

Տախտակ 14

34

35

Տախտակ 15



36

37

38

Տախտակ 16

39

40

Տախտակ 17

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3
2. Երկրագործական մթերքների վերամշակման հարցը պատմագրության մեջ.....13

Գլուխ 1

Հացահատիկի վերամշակումը միջնադարյան Հայաստանում.....27

1. Աղորիքների տիպերը և նրանց զարգացումը (աղորիք, երկանք, ջրաղաց).....31
2. Ջրաղացները որպես հացահատիկ վերամշակող հասութաբեր հաստատություններ 37
3. Ջրաղացների տնտեսական և սոցիալական նշանակությունը.....55
4. Հացահատիկի վերամշակումից ստացվող սննդամթերքները.....67

ԳԼՈՒԽ 2

Այգեգործական մթերքների վերամշակումը.....86
1. Այգեգործություն.....86
2. Պատվաստ, էտ, այգիների բուժումը.....97
3. Այգեգործական մթերքների վերամշակումը.....106
4. Բանջարեղենի վերամշակումը.....125
5. Բամբակի վերամշակումը: Կտավագործություն 132

ԳԼՈՒԽ 3

Խաղողի վերամշակումը 139

ԳԼՈՒԽ 4

Ձիթագործությունը միջնադարյան Հայաստանում 168

Ամփոփում 188

Աղյուսակներ, տախտակներ, գծագրեր.....208

Օգտագործած գրականություն 231

ՀՐԱՉ ՎԵԼԻԽԱՆԻ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ГРАЧ ВЕЛИХАНОВИЧ БЕГЛАРЯН

ОБРАБОТКА ЗЕМЛЕДЕЛЬЧЕСКИХ ПРОДУКТОВ В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

Սրբագրիչ՝ Զեմմա Խաչատրյան

ԵՐԵՎԱՆ 2014

ՀՐԱՉ ԲԵԳԼԱՐՅԱՆԸ
(Հրաչյա Բեգլարյան) պատմական գիտությունների թեկնածու է, երկար տարիներ պատմություն է դասավանդել հանրապետության հոգևոր ու աշխարհիկ մի շարք ուսումնական հաստատություններում, մասնակցել հնագիտական տարբեր արշավախմբերի աշխատանքներին:

Նա շուրջ մեկ տասնյակ գիտական հոդվածների հեղինակ է: Ներկայացվող «Երկրագործական մթերքների վերամշակումը միջնադարյան Հայաստանում» աշխատությունը Հ. Բեգլարյանի երկար տարիների պրպտումների արդյունքն է:

ISBN 978-9939-0-1247-6
9 789939 012476

ՀՐԱՉ ԲԵԳԼԱՐՅԱՆ